

Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀ ԱԳՆ ՊՏ 2016.07.13/1(35)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 04.05.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 30.07.2013
Ստորագրման ամսաթիվը 30.07.2013
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՂԱՐՉ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջև Գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող Կողմեր,

մտադրություն ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավասու մարմինների միջև, ինչպես նաև մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում կոնտրակտորների հետ կամ երկու Պայմանավորվող Կողմերի կոնտրակտորների միջև փոխանակվող գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը,

ցանկանալով գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին համաձայնություն հաստատել, որը կվերաբերի համագործակցության մասին Պայմանավորվող Կողմերի միջև կնքված և կնքվելիք բոլոր համաձայնագրերին և գաղտնի տեղեկատվության փոխանակում ներառող կոնտրակտներին,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Համաձայնագրի շրջանակ

Պայմանավորվող Կողմերը կհամագործակցեն գաղտնի տեղեկատվության պաշտպանության ոլորտում՝ սույն Համաձայնագրին, իրենց պետությունների ազգային օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Հոդված 2

Սահմանումներ

(1) Ըստ սույն Համաձայնագրի նպատակների

1. գաղտնի տեղեկատվություն է համարվում

(ա) Հայաստանի Հանրապետությունում՝

նրա ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների՝ Պետության կողմից

պաշտպանվող տեղեկությունները, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

(բ) Գերմանիայի Ղաշնային Հանրապետությունում՝

այն փաստերը, առարկաները կամ տեղեկությունները, որոնք, անկախ իրենց ներկայացման ձևից, պետք է գաղտնի պահվեն՝ ելնելով հանրային շահից: Դրանք պետք է գաղտնագրվեն պաշտոնական մարմնի կողմից կամ նրա պահանջով՝ դրանց պաշտպանության կարիքներին համապատասխան:

2. գաղտնի կոնտրակտ է համարվում

մի Պայմանավորվող Կողմի պետության իրավասու մարմնի կամ ձեռնարկության (պայմանավորվող պաշտոնյա) և մյուս Պայմանավորվող Կողմի պետության ձեռնարկության (կոնտրակտոր) միջև կնքված կոնտրակտը: Նման կոնտրակտի պայմաններին համապատասխան՝ պայմանավորվող պաշտոնյայի պետությունից գաղտնի տեղեկատվությունը պետք է փոխանցվի կոնտրակտորին, մշակվի կոնտրակտորի կողմից կամ մատչելի դառնա կոնտրակտորի աշխատակազմի այն անդամների համար, որոնք պետք է առաջադրանքներ կատարեն պայմանավորվող պաշտոնյայի կառույցներում:

(2) Անվտանգության դասակարգման աստիճանները սահմանվում են հետևյալ կերպ.

1. Հայաստանի Հանրապետությունում գաղտնի տեղեկատվություն է համարվում՝

(ա) «Հույժ գաղտնի» - եթե դրան ծանոթանալը չլիազորված անձանց կողմից կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

(բ) «Գաղտնի» - եթե դրան ծանոթանալը չլիազորված անձանց կողմից կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

2. Գերմանիայի Ղաշնային Հանրապետությունում գաղտնի տեղեկատվություն է համարվում՝

(ա) GEHEIM (ԳԱՂՏՆԻ), եթե դրան ծանոթանալը չլիազորված անձանց կողմից կարող է սպառնալ Գերմանիայի Ղաշնային Հանրապետության կամ նրա երկրամասերից մեկի անվտանգությանը, կամ էլ կարող է ծանր վնաս հասցնել նրանց շահերին,

(բ) VS-VERTRAULICH (ՎՈՆՖԻՂԵՆՑԻԱԼ), եթե դրան ծանոթանալը չլիազորված անձանց կողմից կարող է վնասել Գերմանիայի Ղաշնային Հանրապետության կամ նրա երկրամասերից մեկի շահերին.

(գ) VS-NUR FÜR DEN DIENSTGEBRAUCH (ՄԻԱՅՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ), եթե դրան ծանոթանալը չլիազորված անձանց կողմից կարող է աննպաստ լինել Գերմանիայի Ղաշնային Հանրապետության կամ նրա երկրամասերից մեկի շահերի համար:

Հոդված 3

Համադրելիություն

Պայմանավորվող Կողմերը պայմանավորվում են, որ ստորև նշված անվտանգության դասակարգումները համադրվում են հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետություն
«Հույժ գաղտնի»
«Գաղտնի»

Գերմանիայի Ղաշնային Հանրապետություն
GEHEIM
VS-VERTRAULICH

Հայկական կողմը VS-NUR FÜR DEN DIENSTGEBRAUCH (ՄԻԱՅՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) համար պետք է ապահովի նույն պաշտպանությունը, ինչ որ «Գաղտնի» դասակարգման համար:

Հոդված 4

Գաղտնագրում

(1) Փոխանցված գաղտնի տեղեկատվությունը գաղտնագրվում է Հոդված 3-ում նախատեսված համադրելի ազգային անվտանգության դասակարգմամբ՝ ստացողի իրավասու մարմնի կողմից կամ նրա պահանջով:

(2) Գաղտնի տեղեկատվությունը, որը ծագել է ստացող երկրում՝ գաղտնի կոնտրակտների հետ կապված, ինչպես նաև ստացող երկրում արված պատճենները նույնպես պետք է գաղտնագրվեն:

(3) Անվտանգության դասակարգումները պետք է տեղեկատվության ծագման երկրի իրավասու մարմնի խնդրանքով փոփոխվեն կամ անվավեր ճանաչվեն տվյալ գաղտնի տեղեկատվության ստացողի իրավասու մարմնի կողմից կամ նրա պահանջով: Ծագման երկրի իրավասու մարմինը պետք է անմիջապես տեղեկացնի մյուս Պայմանավորվող Կողմի իրավասու մարմնին անվտանգության դասակարգումը փոփոխելու կամ անվավեր ճանաչելու մասին:

Հոդված 5

Միջոցառումներ՝ ազգային մակարդակով

(1) Իրենց ազգային օրենսդրության շրջանակներում Պայմանավորվող Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր պատշաճ միջոցառումները սույն Համաձայնագրի պայմանների ներքո ծագած, փոխանակված կամ պահվող գաղտնի տեղեկատվության անվտանգության պաշտպանությունը երաշխավորելու համար: Նման գաղտնի տեղեկատվությանը նրանք պետք է տան անվտանգության պաշտպանության մի աստիճան, որն առնվազն հավասար կլինի տեղեկատվությունը ստացող Պայմանավորվող Կողմի՝ իր սեփական գաղտնի տեղեկատվության նկատմամբ պահանջվող անվտանգության դասակարգման համադրելի աստիճանին:

(2) Գաղտնի տեղեկատվությունը պետք է օգտագործվի բացառապես նախատեսված նպատակով: Տեղեկատվությունը ստացող Պայմանավորվող Կողմը չպետք է գաղտնագրծի կամ օգտագործի, կամ թույլատրի ցանկացած գաղտնի տեղեկատվության գաղտնագրծումը կամ օգտագործումը՝ բացառությամբ այն նպատակներով և այն սահմանափակումների շրջանակներում, որոնք նշվել են տեղեկատվության ծագման Պայմանավորվող Կողմի կողմից կամ նրա անունից: Հակառակ դեպքում գաղտնի տեղեկատվություն տրամադրողը ցանկացած այլ պայմանների վերաբերյալ պետք է տա իր գրավոր համաձայնությունը:

(3) Գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն կարող է տրվել միայն այն անձանց, որոնք, ելնելով իրենց ծառայողական պարտականություններից, պետք է տեղյակ լինեն այդ տեղեկատվությանը և որոնք լիազորված են առնչվելու անվտանգության դասակարգման համադրելի աստիճանի գաղտնի տեղեկատվությանը: Գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվությունը տրվում է միայն անվտանգության ստուգման ավարտից հետո, հաշվի առնելով այն չափանիշները, որոնք ոչ պակաս խիստ են, քան պահանջվում է անվտանգության դասակարգման համադրելի աստիճանի ազգային գաղտնի տեղեկատվության համար:

(4) VS-VERTRAULICH/«Գաղտնի» կամ առավել բարձր մակարդակի գաղտնի տեղեկատվությանը մուտքը՝ Պայմանավորվող կողմի քաղաքացիություն կրող անձի կողմից, պետք է տրամադրվի առանց ծագման Պայմանավորվող Կողմի նախնական թույլտվության:

(5) Պայմանավորվող Կողմի երկրում բնակվող և գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվություն պահանջող քաղաքացիների համար գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվության տրամադրումը պետք է իրականացվի այդ երկրի ազգային անվտանգության մարմինների կամ այլ իրավասու մարմինների կողմից:

(6) Այդուհանդերձ, մի Պայմանավորվող Կողմի քաղաքացիների, ով օրինական կերպով բնակում է մյուս Պայմանավորվող Կողմի երկրում և դիմում է այդ երկրում հույժ գաղտնի աշխատանքի համար, հուսալիության

անհատական ստուգումը պետք է իրականացվի այդ երկրի անվտանգության իրավասու մարմնի կողմից՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով համապատասխան ստուգումներ մյուս Պայմանավորվող Կողմի իրավասու մարմնի աջակցությամբ՝ իր ազգային օրենքներին և կանոնադրություններին համապատասխան:

(7) Պայմանավորվող Կողմերը, յուրաքանչյուրն իր տարածքում, երաշխավորում են, որ կիրականացվեն անվտանգության ապահովման համար անհրաժեշտ անվտանգության ստուգումներ և որ կպահպանվի սույն Համաձայնագրի դրույթների կատարումը:

Հոդված 6

Գաղտնի կոնտրակտների կնքումը

(1) Մինչ գաղտնի կոնտրակտի կնքումը՝ պայմանավորվող պաշտոնյան իր իրավասու մարմնի միջոցով գաղտնի աշխատանքի թույլտվություն է ստանում կոնտրակտորի իրավասու մարմնից, որպեսզի հավաստիանա, արդյոք ապագա կոնտրակտորը այդ երկրի իրավասու մարմնի անվտանգության հսկողության ներքո է գտնվում և արդյոք նա կոնտրակտի կատարումն իրականացնելու համար անհրաժեշտ անվտանգության նախազգուշական միջոցներ է ստանձնել: Եթե կոնտրակտորը դեռևս անվտանգության հսկողության ներքո չի գտնվում, այդ նպատակով կարող է հարցում արվել:

(2) Գաղտնի աշխատանքի թույլտվություն նաև ստացվում է, եթե ձեռնարկությունից պահանջվել է առաջարկ ներկայացնել և եթե գաղտնի տեղեկատվությունը պետք է տրամադրվի մինչև կոնտրակտի կնքումը մրցութային ընթացակարգերի պայմաններին համապատասխան:

(3) Վերոշարադրյալ (1)-ին և (2)-րդ կետերում նշված դեպքերում պետք է կիրառվի հետևյալ ընթացակարգը.

1. Մյուս Պայմանավորվող Կողմի երկրից կոնտրակտորների համար գաղտնի աշխատանքի թույլտվության տրամադրման համար հարցումները պետք է պարունակեն նախազօհի, ինչպես նաև կոնտրակտորին տրամադրվելիք կամ նրա կողմից մշակման ենթակա գաղտնի տեղեկատվության բնույթի, ծավալի և անվտանգության դասակարգման աստիճանի վերաբերյալ տեղեկատվություն:

2. Ի լրումն ձեռնարկության լրիվ անվանը, նրա փոստային հասցեին, անվտանգության հարցերով պատասխանատու աշխատակցի անվանը, հեռախոսի և ֆաքսի համարին և, անհրաժեշտության դեպքում, էլ. հասցեին, գաղտնի աշխատանքի թույլտվությունը պետք է ներառի նաև տեղեկատվություն մասնավորապես այն փաստի վերաբերյալ, թե ինչ ծավալով ու անվտանգության դասակարգման որ աստիճանին համապատասխան և ինչ անվտանգության միջոցառումներ են ձեռնարկվել ձեռնարկության կողմից՝ համաձայն ազգային օրենսդրությանն ու կանոններին:

3. Պայմանավորվող Կողմերի իրավասու մարմինները պետք է տեղյակ պահեն միմյանց այն փոփոխությունների վերաբերյալ, որոնք տեղ են գտել տրամադրված գաղտնի աշխատանքի թույլտվություններում:

4. Պայմանավորվող Կողմերի իրավասու մարմինների միջև նման տեղեկատվության փոխանակումը կիրականացվի կամ համապատասխան ազգային լեզվով՝ անգլերեն թարգմանության ուղեկցությամբ կամ անգլերենով:

5. Գաղտնի աշխատանքի թույլտվությունները և Պայմանավորվող Կողմերի համապատասխան իրավասու մարմիններին հասցեագրված գաղտնի աշխատանքի թույլտվություններ ստանալու համար խնդրագրերը պետք է ներկայացվեն գրավոր կերպով:

Հոդված 7

Գաղտնի կոնտրակտների կատարումը

(1) Գաղտնի կոնտրակտները պետք է պարունակեն անվտանգության պահանջի վերաբերյալ կետ, համաձայն որի կոնտրակտորը պարտավորվում է ձեռնարկել գաղտնի տեղեկատվության պաշտպանության համար պահանջվող միջոցառումներ իր երկրի ազգային օրենսդրությանն ու կանոններին համապատասխան:

(2) Ի լրումն՝ անվտանգության պահանջի մասին կետը պետք է պարունակի հետևյալ դրույթները.

1. «գաղտնի տեղեկատվություն» տերմինի և երկու Պայմանավորվող Կողմերի համադրելի պաշտպանական գաղտնագրումների աստիճանների և անվտանգության դասակարգումների սահմանումը՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան,

2. Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմնի անվանումը, որը լիազորված է թույլատրել կոնտրակտին առնչվող գաղտնի տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև գաղտնի տեղեկատվության պաշտպանության համակարգումը,

3. իրավասու մարմինների և ներգրավված կոնտրակտորների միջև գաղտնի տեղեկատվության փոխանակման համար օգտագործվելիք ուղիները,

4. գաղտնի տեղեկատվության պաշտպանական գաղտնագրումներում փոփոխությունների կամ տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտության դադարման պատճառով փոփոխությունների հաղորդման համար ընթացակարգերը և մեխանիզմները,

5. կոնտրակտորների աշխատակիցների այցերին հավանություն տալու կամ գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն ստանալու համար ընթացակարգերը,

6. կոնտրակտորներին գաղտնի տեղեկատվությունը փոխանցելու համար ընթացակարգերը, որտեղ այդ տեղեկատվությունը պետք է օգտագործվի կամ պահվի,

7. պահանջը, որ կոնտրակտորը պետք է գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվություն տրամադրի միայն այն անձին, ով, ելնելով իր ծառայողական պարտականություններից, պետք է ստանա այդ թույլտվությունը և նրան է վստահվել կոնտրակտի կատարումը կամ նա նպաստում է դրան և նա նախօրոք անցել է համապատասխան աստիճանի գաղտնի տեղեկատվությանն առնչվելու համար ստուգում,

8. պահանջը, որ գաղտնի տեղեկատվությունը պետք է գաղտնագրվի, կամ որ գաղտնի տեղեկատվության գաղտնագրումը միայն թույլատրվելու է այն երրորդ կողմին, որին թույլատրել է Պայմանավորվող Կողմը,

9. պահանջը, որ կոնտրակտորը պետք է անհապաղ տեղեկացնի իր իրավասու մարմնին կոնտրակտով նախատեսված գաղտնի տեղեկատվության որևէ իրական կամ կասկածելի կորստի, արտահոսքի կամ ոչ լիազորված գաղտնագրածման մասին:

(3) Պայմանավորվող պաշտոնյայի իրավասու մարմինը կոնտրակտորին պետք է ներկայացնի անվտանգության դասակարգում պահանջող փաստաթղթային զրանցումների առանձին ցուցակ /դասակարգման ուղեցույց/, սահմանի անվտանգության դասակարգման պահանջվող աստիճանը և հետևի, որպեսզի այդ ցուցակը որպես հավելված կցվի գաղտնի կոնտրակտին: Պայմանավորվող պաշտոնյայի իրավասու մարմինը ցուցակը պետք է նաև փոխանցի կամ կազմակերպի ցուցակի փոխանցումը կոնտրակտորի իրավասու մարմնին:

(4) Պայմանավորվող պաշտոնյայի իրավասու մարմինը պետք է ապահովի, որ կոնտրակտորը գաղտնի տեղեկատվությանն առնչվելու իրավունք ունենա միայն կոնտրակտորի իրավասու մարմնի կողմից գաղտնի փաստաթղթերին առնչվելու թույլտվությունը ստանալուց հետո:

Հոդված 8

Գաղտնի տեղեկատվության փոխանցումը

(1) Սկզբունքորեն «VS-VERTRAULICH/Գաղտնի» և «GEHEIM/Հույժ գաղտնի» աստիճանների գաղտնի տեղեկատվությունը մի երկրից մյուս երկիր պետք է փոխանցվի պաշտոնական սուրհանդակի միջոցով: Պայմանավորվող Կողմերի Ազգային անվտանգության մարմինները/Անվտանգության նշանակված մարմինները կարող են համաձայնության գալ փոխանցման այլընտրանքային ուղիների շուրջ: Գաղտնի տեղեկատվության ստացումը պետք է հաստատված լինի իրավասու մարմնի կողմից, կամ նրա պահանջով և գաղտնի տեղեկատվությունը պետք է ստացողին հանձնվի ազգային օրենսդրությանն ու կանոններին համապատասխան:

(2) Հատուկ նշված նախագծի համար, իրավասու մարմինները կարող են համաձայնել՝ ամբողջովին, կամ որոշակի սահմանափակումներով, որ «VS-VERTRAULICH/Գաղտնի» և «GEHEIM/Հույժ գաղտնի» աստիճանների գաղտնի տեղեկատվությունը կարող է փոխանցվել պաշտոնական սուրհանդակին այլընտրանք հանդիսացող ուղիներով, եթե պաշտոնական սուրհանդակի ծառայության վրա վստահությունը կարող է անտեղի դժվարություններ պատճառել նման փոխանցման, կամ կոնտրակտի կատարման համար: Նման դեպքերում՝

1. հանձնողը պետք է լիազորված լինի առնչվելու դասակարգման համադրելի աստիճանի գաղտնի տեղեկատվությանը,

2. փոխանցված գաղտնի տեղեկատվության առարկաների ցուցակը պետք է պահպանվի այն ուղարկող մարմնի կողմից: Այդ ցուցակի մի օրինակը պետք է հանձնվի ստացողին՝ իրավասու մարմնին փոխանցելու համար,

3. գաղտնի տեղեկատվության առարկաները պետք է փաթեթավորվեն ազգային սահմանների ներսում փոխադրումները կարգավորող կանոնակարգերի համաձայն,

4. գաղտնի տեղեկատվության առարկաները պետք է հանձնվեն ստացականով,

5. հանձնողը պետք է սուրհանդակի սերտիֆիկատ ունենա՝ տրված, ուղարկող կամ ընդունող հաստատության իրավասու մարմնի կողմից:

(3) Այն դեպքում, երբ գաղտնի տեղեկատվության մեծ ծավալ պետք է փոխանցվի, փոխադրման միջոցները, ուղիները և ուղեկցողը պետք է սահմանվեն յուրաքանչյուր դեպքի համար առանձին և իրավասու մարմնի կողմից փոխադրման մանրակրկիտ ծրագրի հիման վրա:

(4) «VS-VERTRAULICH/Գաղտնի» աստիճանի և ավելի բարձր, գաղտնի տեղեկատվության էլեկտրոնային փոխանցումը պետք է տեղի ունենա ծածկագրված ձևով: Անվտանգության դասակարգման այս աստիճանների գաղտնի տեղեկատվությունը կարող է միայն գաղտնագրվել Պայմանավորվող Կողմերի անվտանգության իրավասու մարմինների կողմից փոխադարձ համաձայնությամբ հաստատված գաղտնագրման միջոցներով:

(5) «VS-NUR FÜR DEN DIENSTGEBRAUCH» աստիճանի գաղտնի տեղեկատվությունը կարող է մյուս Պայմանավորվող Կողմի տարածք փոխանցվել փոստի կամ ուղարկող այլ ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով ազգային օրենսդրությունն ու կանոնները:

(6) «VS-NUR FÜR DEN DIENSTGEBRAUCH» գաղտնի տեղեկատվությունը էլեկտրոնային ձևապարհով կարող է փոխանցվել կամ մատչելի դառնալ Պայմանավորվող Կողմերին՝ ազգային իրավասու մարմնի կողմից հաստատված գաղտնագրման կոմերցիոն սարքերի միջոցով: Անվտանգության դասակարգման այս աստիճանի գաղտնի տեղեկատվությունը չգաղտնագրված ձևով կարող է փոխանցվել միայն այն դեպքում, եթե այն չի հակասում ազգային օրենսդրությանն ու կանոններին, եթե չկան գաղտնագրման հաստատված միջոցներ, փոխանցումը իրականացվում է միայն ֆիքսված ցանցերի ներսում և այն պայմանով, որ ուղարկողն ու ստացողը նախապես համաձայնության են եկել առաջարկված փոխանցման շուրջ:

Այցելություններ

(1) Սկզբունքորեն, միայն ընդունող երկրի Պայմանավորվող Կողմի իրավասու մարմնի նախնական թույլտվությամբ է, որ այցելուները մի Պայմանավորվող Կողմի տարածքից ժամանելով մյուսի տարածք՝ կարող են գաղտնի տեղեկատվություն և այն կառույցները մուտքի իրավունք ստանալ, ուր գործ ունեն գաղտնի տեղեկատվության հետ: Նման թույլտվությունը կտրվի միայն այն անձանց, ովքեր ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված թույլտվություն ունեն և լիազորված են առնչվելու գաղտնի տեղեկատվության հետ:

(2) Պայմանավորվող Կողմի իրավասու մարմնին այցելության համար հարցումները ներկայացվում են ժամանակային հիմքի վրա և այն Պայմանավորվող Կողմի կանոնակարգերին համապատասխան, որի տարածք այդ այցելուները ցանկանում են մուտք գործել: Իրավասու մարմինները միմյանց կտեղեկացնեն նման հարցումների հետ կապված մանրամասների վերաբերյալ և կերաշխավորեն, որ այցելուների անձնական տվյալները կպահպանվեն:

(3) Այցելությունների համար հարցումները կներկայացվեն ընդունող երկրի լեզվով կամ անգլերեն լեզվով և կընդգրկեն հետևյալ տեղեկատվությունը.

1. այցելուի անունը և ազգանունը, ծննդյան օրն ու վայրը, անձնագրի կամ ինքնությունը հաստատող փաստաթղթի համարը,
2. այցելուի քաղաքացիությունը,
3. այցելուին ներկայացնող ծառայության անվանումը և նրա վերադաս մարմնի կամ հաստատության անվանումը,
4. այցելուի՝ գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվության աստիճանը,
5. այցելության նպատակը և այցելության համար առաջարկվող օրը,
6. ընդունող հաստատությունների, կոնտրակտային անձանց և կառույցների անունները:

Հոդված 10

Խորհրդատվություններ

(1) Պայմանավորվող Կողմերի իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը կարգավարող նորմերը, որոնք կիրառվում են մյուս Պայմանավորվող Կողմի տարածքում:

(2) Սույն Համաձայնագրի կատարման նպատակով սերտ համագործակցություն ապահովելու համար իրավասու մարմինները պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ այդ մարմիններից որևէ մեկի հարցմամբ:

(3) Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ, ի լրումն, թույլատրում է մյուս Պայմանավորվող Կողմի ազգային կամ անվտանգության նշանակված մարմնին, կամ ցանկացած այլ մարմնի՝ նշանակված փոխադարձ համաձայնությամբ, այցելելու իր տարածք, որպեսզի իր անվտանգության մարմինների հետ քննարկի մյուս Պայմանավորվող Կողմից ստացված գաղտնի տեղեկատվության պաշտպանության գործընթացներն ու ծառայությունները: Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ աջակցում է, որ մարմինը հավաստիանա, արդյոք մյուս Պայմանավորվող Կողմից ձեռք բերված նման գաղտնի տեղեկատվությունը պատշաճ ձևով է պահպանվում: Այցելությունների մանրամասները կհաստատվեն իրավասու մարմինների կողմից:

Հոդված 11

Գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանությունը կանոնակարգող դրույթների խախտումը

(1) Երբ գաղտնի տեղեկատվության չլիազորված գաղտնագերծումը հնարավոր չէ բացառել, կամ եթե նման գաղտնագերծումը կասկածվում է կամ հաստատված է, մյուս Պայմանավորվող Կողմը պետք է անհապաղ տեղեկացվի այդ մասին:

(2) Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը կարգավորող նորմերի խախտումները պետք է հետաքննվեն և համապատասխան իրավական գործողություններ ձեռնարկվեն՝ Պայմանավորվող Կողմի այն իրավասու մարմինների և այն դատարանների կողմից, որոնք իրավասություն ունեն՝ տվյալ Պայմանավորվող Կողմի օրենսդրությանը համաձայն: Մյուս Պայմանավորվող Կողմը հարցման դեպքում աջակցում է այդ հետաքննություններին և տեղեկացվում է արդյունքների մասին:

Հոդված 12

Ծախսերը

Յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմ վճարում է սույն Համաձայնագրի դրույթների իրականացմամբ պայմանավորված ծախսերը:

Հոդված 13

Վեճերի կարգավորում

Պայմանավորվող Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ պետք է լուծվի Պայմանավորվող Կողմերի միջև խորհրդակցությամբ և չպետք է փոխանցվի որևէ այլ ազգային կամ միջազգային դատարան կամ երրորդ կողմի՝ լուծման համար:

Հոդված 14

Իրավասու մարմիններ

Պայմանավորվող Կողմերը պետք է տեղեկացնեն միմյանց այն մարմինների վերաբերյալ, որոնք պատասխանատու են սույն Համաձայնագրի կատարման համար:

Հոդված 15

Եզրակակիչ դրույթներ

(1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կծանուցի Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանն այն մասին, որ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ազգային պահանջները բավարարված են: Համապատասխան ամսաթիվ է համարվում ծանուցման ստացման ամսաթիվը:

(2) Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

(3) Պայմանավորվող Կողմերից մեկի նախաձեռնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին Արձանագրությամբ և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված ընթացակարգերին համապատասխան՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը:

(4) Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագիրը կարող է դադարեցնել գործողության վեցամսյա ժամկետի պահպանման պայմանով՝ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցմամբ:

Դադարեցման դեպքում, սույն Համաձայնագրի հիման վրա կոնտրակտորի կողմից փոխանցված կամ մշակված գաղտնի տեղեկատվությանը պետք է շարունակել վերաբերվել սույն Համաձայնագրի Հոդված 5-ի դրույթներին համապատասխան, քանի դեռ արդարացված է անվտանգության դասակարգման գոյությամբ:

(5) Սույն Համաձայնագրի գրանցումը Միավորված Ազգերի Կազմակերպության Քարտուղարության կողմից, Միավորված Ազգերի Կանոնադրության Հոդված 102-ի համաձայն, կնախաձեռնի այն Պայմանավորվող Կողմը, որի ազգային տարածքում կնքվել է Համաձայնագիրը՝ այն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո: Սյուս Պայմանավորվող Կողմին կտեղեկացվի գրանցման և ՄԱԿ գրանցման համարի մասին՝ Քարտուղարության կողմից այն հաստատվելուց անմիջապես հետո:

Կատարված է ք. Երևանում 2013թ. հուլիսի 30-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով. բոլոր տեքստերը նույնական են: Հայերեն և գերմաներեն տեքստերի մեկնաբանման տարաձայնության դեպքում՝ նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. մայիսի 4-ին